ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1965 Общественные науки

ԴՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Դ. ՀՈՎՍԵՓՅԱՆ. — «ՆԱՐ-ԴՈՍ»

Հայպետհրատ, Երևան, 1961, 481 էջ:

Հայ ռեալիստական արձակը հանձին Ալեքսանդր Շիրվանզադեի, Նար-Դոսի և Գրիգոր Զոհրապի նշանավորեց գեղարվեստական զարգացման մի նոր, առավել բարձր աստիճան։ Մեր գրականության այդ խոշորագույն ռեալիստներից մեկի՝ Նար-Դոսի կյանքի և ստեղծագործության գիտական վերլուծությանն է նվիրված գրականագետ Դարեգին Հովսեփյանի «Նար-Դոս» ստվարածավալ ուսումնասիրությունը, ուր հեղինակը հանգամանորեն քննարկել է մեծ ռեալիստ-հոգեբանի ստեղծագործությունը՝ սերտորեն կապակցված գրականության պատմական զարգացման ընթացքի հետ։ Իր հետազոտության մեջ գրականագետը ձգտել է Նար-Դոսի արձակը ներկայացնել գաղափարական ու ոճական միասնության մեջ։ Մեթոդոլոգիական այդ ճիշտ մոտեցումը հնարավորություն է տվել հեղինակին բազմակողմանիորեն ցույց տալու այն խոշոր ավանդը, որ ներդրել է Նար-Դոսը ռեալիզմի զարգացման ասպարեզում։

Մենագրության առաջին գլխում Դ. Հովսեփյանը բարձրացնում է Նար-Դոսի ռեալիստական մեթոդի առանձնահատկությունների հարցը, վեր է հանում ռեալիստական հոգեբանական բարձր վարպետության և քննադատական խոր, հարուստ բովանդակության խոշոր նշանակությունը հայ գրականության համար։ Դրական է այն հանգամանքը, որ մենագրության հեղինակը աշխատում է այդ ամենը ներկայացնել արձակագրի գեղարվեստական մեթոդի լինելիության, ամրապնդման ու զարգացման ընթացքում, այն չանջատելով ընդհանրապես ժամանակի նշանավոր ռեալիստների ստեղծագործական նվաճումներից ու տրադիցիաներից։ Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ գրականագետին հաջողվել է ճշմարտացիորեն կողմնորոշվել մեթոդի տեսության հարցերում և հատկապես գիտականորեն վերլուծել Նար-Դոսի արվեստի էական կողմերը։ Նար-Դոսի ստեղծագործական մեթոդի բնութագրման կապակցությամբ քննության է առնվում մեծ ռեալիստի գեղագիտական հիմնական սկզբունքները, պարզաբանում նրա ստեղծագործական դավանանքի էությունը։ Առաջին անգամ փորձ է կատարված ի մի բերելու կլասիկ արձակագրի հիմնական գեղագիտական ասույթները։ Այդ նպատակով լայնորեն օգտագործված են Նար-Դոսի հոդվածները, նամականին, ինչպես և ժամանակակիցների հիշողությունները։

«Կենսագրական ակնարկ» գլխում մենագրության հեղինակը ընդարձակ ներկայացրել է ականավոր ռեալիստի կյանքի պատմությունը նշելով, որ առանձին ընկերների մոտ ժամանակին այն տպավորությունն է ստեղծվել, թե արձակագրի կենսագրությունն առանձնապես աչքի ընկնող կողմեր չունի։ Դ. Հովսեփյանը մի շարք նոր տվյալների և այլ փաստաթղթերի հիման վրա, մասնավորապես Նար-Դոսի արխիվի նյութերի օգտագործմամբ, ներկայացնում է մեծ գրողի կյանքը, այն բնութագրելով որպես զրկանքների ու տառապանքների մի հերոսական տարեգրություն։

Նախքան Նար-Դոսի հիմնական գեղարվեստական վաստակի վերլուծությանն անցնելը մենագրության հեղինակը կանգ է առնում հեղինակի վաղ շրջանի մի շարք ստեղծագործությունների առանձնահատկությունների վրա։ Այստեղ մասնավորապես խոսվում է բանաստեղծական փորձերի, «Մեղր ու ճանճեր», «Ճշմարիտ բարեկամ», «Նունե», «Քնքուշ լարեր» և այլ գործերի մասին։ «Պատմվածքի մեծ վարպետը» գլխում գրականագետը Նար-Դոսին բնութագրում է որպես հետևողական ռեալիստի, կոմպոզիցիայի մեծ վարպետի։

Ոչ միայն հոգեբանորեն խորացված իր տիպերով, այլև գիտականորեն հիմնավորված գեղագիտական սկզբունքներով Նար-Դոսը գտնում է, որ գրողի հաջողությունը պայմանավորված է ժողովրդի ճակատագրի հետ ունեցած սերտ կապով։ Նար-Դոսը առաջին հրատհայաց հոգեբան արձակագիրներից մեկն էր, որ իր գրչակից ընկերների հետ ամրողջ խորությամբ և պարզությամբ ցուցադրեց իր ապրած ժամանակաշրջանը, դատավճիռ կարդաց բուրժուական մարդատյաց աշխարհին։

Լայն են Նար-Դոս արվեստագետի ընդգրկման շրջանակները։ Նրա ուշադրության կենտրոնում են կյանքի հատակին գտնվող մարդիկ, իրենց յուրահատուկ ներքնաշխարհով, հույզերով, ապրումներով։ Նար-Դոսի քննադատական-ռեալիստական մեթոդի հետքում ընկած են ժողովրդական լայն զանգվածների շահերը, ձգտումները, գեղագիտական իդեալները։

Անդրադառնալով Նար-Դոսի երկերի ստեղծագործական պատմությանը, գրականագետը համոզիչ փաստերով հաստատում է, որ նրա յուրաքանչյուր գործ կյանքի խոր ընդգրկման, հոգեբանական նրբակերտ զգացման արդյունք է։ Անվանի գրողի ամենակարևոր արժանիքը, ինչպես նկատում է գրականագետը, «ոճի արտասովոր նրբակերտության, հոգեբանական որոնումների միասնականության, տիրող ողբերգական զգացմունքների զուսպ և միևնույն ժամանակ հարուստ բովանդակություն արտահայտող պատկերային սիստեմն է»։

Որդեգրելով քննադատական ռեալիզմի ուղղությունը, Նար-Դոսը սակայն միանգամից չհասավ ժողովրդական գրողի աստիճանին, միանգամից չդարձավ ազգային հպարտությունների մեկը։ Ստեղծագործական երկարաձիգ և բարդ ուղի է անցել գրողը, մինչև բյուրեղացել, դասականացել է, դարձել բառի լայն իմաստով ժողովրդական, համահայրենական։ 80-ական թվականների կեսերին նրա ստեղծագործական կյանքում տեղի ունեցած վճռական բեկումից հետո անընդհատ ընդարձակվեցին, խորացան Նարդոսյան սոցիալ-հոգեբանական տիպերի ընդգրկման շրջանակները, հեղինակի ստեղծագործական պատկերասարը հարստացավ նոր, կենսահաստատ դիմաքանդակներով։ Մի քանի տարվա ընթացքում հայ դասական գրականությունը համալրվում է Նար-Դոսի ներգործուն արվեստի կնիքը կրող լիարժեք պատմվածքներով, վիպակներով, վեպերով։

Ուսումնասիրության ամենաարժեքավոր գլուխները հեղինակի պատմվածքների, վիպակների, վեպերի վերլուծություններն ընդգրկող հատվածներն են։ Նար-Դոսն, անտարակույս, պատմվածքի մեծ վարպետ էր, բայց միաժամանակ վիպակի, վեպի մեջ սակավ մրցակիցներ ունեցող համաժողովրդական հեղինակություն։ Երկու դեպքում էլ առկա է բարձրարվեստ, բարձրաճաշակ, բծախնդիր ստեղծագործողը, գեղագետը, մտածողը։ Հեղինակի պատմվածքները քննարկելով ժամանակի սոցիալ-քաղաքական կյանքի ֆոնի վրա, Գ. Հովսեփյանը եզրակացնում է, որ դրանք «...ունեն ունիկալ արժեք ու նշանակություն...», որ մեծահամբավ արվեստագետը վիթխարի ջանքեր է գործադրել «ռեալիստական պատմվածքը հայ գրականության մայրուղի դուրս բերելու համար»։

Եվ արդարև, հանձին Նար-Դոսի, հայ պատմվածքն ու նովելը դուրս բերվեցին զարգացման լայն ուղի թե՛ ձևի, թե՛ բովանդակության տեսակետից։ Գրական այդ ժանրին նա հաղորդեց համամարդկային երանգ, մեծ գրավչություն։ Այդ դեռ բոլորը չէ. Նար-Դոսի մանր գործերը, հատկապես «Մեր թաղը» շարքը, իր վրա գրավեց ոչ միայն հայ և օտար ընթերցողների, այլև գրողների, արվեստագետների ուշադրությունը, դարձավ ռեալիստական արվեստի բարձր չափանիշ։

Գրականագիտական բարձր մակարդակով են վերլուծված «Մեր թաղի» գրեթե բոլոր գործերը, բայց ամենից ուշագրավը մեր կարծիքով՝ «Ինչպես բժշկեցին», «Սաքուլն ուխտ գնաց», «Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց» պատմվածքների վերլուծությունն է։ Խուսափելով նյութի շաբլոն, տրաֆարետային շարադրանքից, Գ. Հովսեփյանը հեղինակի վերոհիշյալ պատմվածքները քննության է առնում հասարակական երևույթների տիպականացման, գեղարվեստական ոճի ուղղության տեսակետից։

Նարդոսյան կերպարներից յուրաքանչյուրը (Ջուլհակ Թորոս, Դրբաց Գրիգոր, Մարթա, Օսան, Սաքուլ, Ցական, Յաղոր, Աննա, Պառավ Հեղինար և այլն) սոցիալ-հոգեբանական մի ուրույն աշխարհ է։ Նրանց ընդհանրացմանը մեծապես նպաստում են «թաղի մարդկանց բարքերը պատկերող մանրամասները», կենցաղին, սովորույթին վերաբերող տիպական նկարագրությունները։

Գ. Հովսեփյանի այն միտքը, թե Նար-Դոսի պատմվածքներում ոչինչ գրքային մտացածին չկա, ավելորդ է ապացուցել. այդ անժխտելի ճշմարտությունը հաստատում են կյանքի հետ, կյանքի համար բախվող, փրկության ելք որոնող Նար-Դոսի հերոսները։ Նրանց հայացքներում, կեցվածքներում անգամ դրված է ժամանակի կնճռոտ կնիքը։ «Մեր թաղի» մյուս մոտիվներում ևս («Հոգուն վրա հասավ», «Հոպոպ», «Սև փողերի սոկոսը») արտասովոր ուժով արտահայտվել է Նար-Դոսի անխառն ժողովրդայնությունը, հումանիզմը, դեմոկրատիզմը։

Մեծ գրողի ստեղծագործական «հաշվեմատյանում» պատկառելի տեղ են գրավում վիպակներն ու վեպերը, հատկապես՝ «Աննա Սարոյան», «Սպանված աղավնին», «Պայքար» և «Մահը»։ Այդ երկերը նյութի ընդգրկման, մարդկային ներքնաշխարհի բացահայտման տեսակետից, դասվում են հայ և համաշխարհային գրականության ռեալիստական լավագույն երկերի շարքը։

Քննարկելով Նար-Դոսի «Աննա Սարոյան», «Սպանված աղավնի», «Տանտիրոջս աղջիկը» վիպակները, ուսումնասիրության հեղինակը մատնանշում է այն ներքին օղակը, որ նրանց միաց-

նում, մի բնդհանուր ամբողջություն է դարձնում։ Դա բուրժուական հասարակության դեմ ուղղված հեղինակի արգահատանքի զգացումն է, հասարակական սիստեմի տարբեր կողմերի դեմ ունեցած մերկացման տենդենցը։

Մինչև վերջը հավատարիմ մնալով ճշմարտության սկզբունքին, Նար-Դոսը պատռում է բուրժուական շահամոլների վարագուրված դիմակները, պաշտպան կանգնում վերջիններիս կողմից հալածված հասարակ մարդկանց։ Դրամի կուտակման մոլուցքը մարդուն դուրս է բերում մարդկային ամեն սահմաններից, դարձնում նասսեր, բռնապետ, զգաստ դրկվել դրամագլխից, հարստությունից, նշանակում է դրկվել դիրքից, հեղինակությունից, դառնալ ամենաողորմելի արարածը աշխարհում։

Վերլուծելով «Աննա Սարոյանը» վիպակը, կանգ առնելով գլխավոր հերոսուհու սոցիալ-հոգեբանական բնութագրի վրա, Գ. Հովսեփյանը ընդհանրացնում է, գտնելով, որ «...Աննա Սարոյանի խառնվածքի մեջ ճշմարտացի արտահայտություն են գտել մի ամբողջ երիտասարդ սերնդի բախտի, նրա հոգեբանության... առանձնահատուկ գծերը»։ Դրականը, արժեքավորն այն է, որ խոսելով «Աննա Սարոյանի» մասին, գրականագետը չի սահմանափակվում հերոսուհու այս կամ այն միտքը, բնավորության դիծը սոսկ արձանագրելով, այլ դրանց հիման վրա կատարում է հեղինակի դեմոկրատական աշխարհայացքին, ռեալիստական արվեստին վերաբերող կարևոր ընդհանրացումներ։

Երեք վիպակն էլ («Սպանված աղավնին», «Աննա Սարոյանը», «Տանտիրոջս աղջիկը») քննության են առնվում արձակագրի գեղարվեստական մեթոդի զարգացման տեսակետից և վեր հանվում այդ երկերի հոգեբանական պատկերման մեծ նշանակությունը։ Հոգեբանական ռեալիզմը իր ուրույն մարմնացումն է գտել նաև «Պայքար» վեպում, ուր անխնա կերպով քննադատության են ենթարկված հասարակական հարաբերությունները, արատները, լիբերալների ու պահպանողականների հայացքները, բնդգրկելով կենսական մեծ նյութ։ Աշխատության մեջ մանրամասն կերպով և հաջորդաբար բացահայտվում է առանձնապես Մանեի հոգեբանական բարդ խառնվածքի տիպականությունը և հարստությունը։ Վահանի և մյուս կերպարների հիմնական յուրահատկությունների լուսաբանությունը նույնպես կատարված է հմուտ կերպով, հաշվի առնելով կլասիկ արձակագրի հարուստ երևակայական բոլոր գույները ու նրբերանգները։ Այս կերպ աստիճանաբար դրսևորվում է և իսորապես արժեքավորվում ականավոր ռեալիստի հոգեբանական վերլուծությունների ողջ հարստությունը, զգացմունքների ողբերգական գեղեցկությունը։ Մենագրությունում լուսաբանված են նաև երկրորդական տիպարները, որովհետև դրանց բնութագրության մեջ նույնպես արձակագիրը հանդես է գալիս որպես ճշմարիտ հոգեբան-արվեստագետ։ Խոսելով «Պայքար» վեպի գեղարվեստական առանձնահատկությունների մասին, գրականագետը ուշադրություն է դարձրել նաև Նար-Դոսի դրսևորած երգիծական ունակություններին, որոնք արտահայտված են Վահանի հեգնական մտածելակերպի և վարքագծի մեջ։ Գրականագետը անվիճելի է համարում այն հանգամանքը, որ Վահանը յուրովի արտահայտում է Նար-Դոսի բացասական վերաբերմունքը լիբերալների և պահպանողականների մտայնության ու հարաբերությունների մասին։ Մյուս կողմից, հավասարության նշան չի դրվում հեղինակի և Վահանի համոզմունքների միջև։

«Մահը» վեպի վերլուծության ընթացքում հանգամանորեն ցույց է տրվում, թե ինչպես է արձակագիրը, օգտագործելով հայ և ռուս վեպի տրադիցիաները, կարողացել վերարտադրել ժամանակի իրականության տիպական կողմերը։ Այդ վերլուծությունների դրական կողմն այն է, որ գաղափարական բովանդակությունը զուգորդվում է գեղարվեստական առանձնահատկությունների լուսաբանման հետ և վեպն, այսպիսով, արժեքավորվում է որպես մի կենդանի, ամբողջական օրգանիզմ։ Շեշտելով «Մահը» վեպի ռեալիստական արվեստի հիմնական յուրահատկությունները, Գ. Հովսեփյանը ցուցաբերում է գրականագիտական հետաքրքրությունների բազմակողմանիություն և ընդհանրացումներ կատարելու ունակություն։

Մենագրության հեղինակը պատշաճ ուշադրություն է դարձնում նաև վեպում Շահյանի կողմից արտահայտված հոռետեսական տրամադրությունների քննադատությանը։ Ինչպես հայտնի է, դեռևս կան գրականագետներ, որոնք շարունակում են հավասարության նշան դնել Նար-Դոսի ու Շահյանի համոզմունքների միջև և անտեսում են վեպում հոռետեսության դեմ ծավալված հետևողական ու անողոք քննադատությունը։ Մենագրության մեջ այս հանգամանքը ցույց է տրված արժանահավատ կերպով ու համոզիչ օրինակներով։ Ուշագրավ են այդ տեսակետից Եվայի ու Աշխենի վեճերն ու տարաձայնությունները Շահյանի հետ։ Իսկ Մինասյանի դիպուկ խոսքերի մեջ ավելի որոշակի է արտահայտված վիպասանի գաղափարական դիրքորոշումը.— «Չէ՛, ամենևին չէ։ Իզուր ես բարկանում։ Ես նրա համար եմ այդպես կարծում, որովհետև քո այդ

Շոպենհաուերը հենց ինքն է առաջինը, որ ծաղրում է իր քարոզած մտքերը։ Նա կյանքն անտանելի թշվառություն էր համարում, բայց ինքը փառավորապես օգտվեց այդ կյանքից ամբողջ յոթանասուն տարի։ Մարդկությանը նա դեպի մահ էր հրավիրում, բայց ինքը, շարունակ ատելանակ էր մահ ածում հետը անձնա... չկարծես անձնասպանության, ոչ — անձնապաշտպանության համար։ Մարդկության թշվառության աղբյուրը նա կանանց էր համարում, բայց ինքը շարունակ կանանց գրկումն էր երջանիկ ժամեր գտնում և վերջը, կարծեմ, ապարինի զավակներ թողեց։ Մի այլ կապակցությամբ նույնպես շեշտվում են Մինասյանի համարձակ խոսքերը, որոնք ուղղված են պեսիմիստական փիլիսոփայության դեմ. «Երիտասարդ մարդ ես, ինչ ես նստել տան չորս պատերի միջև ուղեղդ ու մարմինդ փտեցնում մետաֆիզիկական տխմար վերացումների մեջ»։ Աշխատության մեջ էական տեղ է գրավում Շահյանի վերջին խոսքի հանգամանալի վերլուծությունը, որին հատկացված է մի առանձին գլուխ։ Այստեղ մեկ առ մեկ լուսաբանված են Շահյանի վերջին խոսքում շոշափված փիլիսոփայական ու էտիկական հիմնական հարցերը։ Գրականագետը ճիշտ է նշում, որ վերջին խոսքը բխում է Շահյանի տիպի վարքագծի, նրա հոգեբանության տրամաբանական զարգացումից։ Շեշտվում է հատկապես նարդոսյան քննադատության օբյեկտիվ բնույթը։

Գ. Հովսեփյանի աշխատությունը առանձին թերություններով (որոշ ձգձգված հատվածներ, կրկնվող մտքեր, դատողություններ, լեզվա-ոճական առանձին անհարթություններ) հանդերձ, ներդրում է ոչ միայն նարդոսագիտության, այլ առհասարակ հայ գրականագիտության մեջ։ Հայ դասական արձակի ականավոր ներկայացուցչի ստեղծագործական այս ամբողջական ուսումնասիրությունը մեծ օգնություն է հայ գրականության պատմությունը մոտիկից ուսումնասիրողներին։

Ս. Հ. ՍԱՐԳՍՅԱՆ